

ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕՂ


Մթնոլորտային օդի աղտոտումը կարող է լինել բնական և մարդածին: Աղտոտման հիմնական պատճառներ կարող են հանդիսանալ՝

- վառելիքի այրումը (էլեկտրաէներգիայի արտադրություն, տրանսպորտ, արդյունաբերություն և տնային տնտեսություններ),
- արդյունաբերական արտանետումները, լուծիչների օգտագործումը, օրինակ՝ քիմիական և հանքարդյունաբերության ոլորտում.
- գյուղատնտեսությունը,
- թափոնների բաց այրումը,
- բնական աղբյուրների, ներառյալ հրաբխային ժայթքումների, լեռնային փոշու տարածումը, բույսերից ցնդող օրգանական միացությունների արտանետումները և այլն:


Մարդու գործունեության հետևանքով մթնոլորտային օդ կարող են արտանետվել տարատեսակ գազեր և տարբեր չափերի մասնիկներ, որոնք իրենց մեջ պարունակում են ծանր մետաղներ:

Մթնոլորտն աղտոտող նյութերի պարունակությունները որոշելու համար 2020 թվականի ապրիլին դիտարկումներ կատարվել են Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Ծաղկաձոր, Չարենցավան, Կապան և Քաջարան քաղաքներում: Ընդհանուր առմամբ վերը թվարկված բնակավայրերում գործում է 15 անշարժ՝ ակտիվ նմուշառման դիտակայան, և 211 շարժական՝ պասիվ նմուշառման դիտակետ:

Կորոնավիրուսի համավարակի դեմ պայքարի համար կիրառված միջոցառումներով պայմանավորված, մի շարք բնակավայրերում ապրիլին մարտ ամսվա համեմատությամբ դիտվել է փոշով օդի աղտոտվածության մակարդակի նվազում: Այսպիսով, Երևան քաղաքում փոշու պարունակությունը նվազել է մոտ 33%-ով, Ալավերդում՝ 24%-ով և Հրազդանում՝ 25%-ով, Ծաղկաձորում՝ 60%-ով, այնինչ Գյումրի, Վանաձոր և Արարատ քաղաքներում բարձրացել է համապատասխանաբար՝ 16%-ով, 7%-ով և 21%-ով: Ապրիլ և մարտ ամիսներին Վանաձոր, Ալավերդի և Հրազդան քաղաքներում դիտվել է փոշու միջին ամսական կոնցենտրացիայի գերազանցում համապատասխան ՄԹԿ-ից: Հիշեցնենք, որ փոշով աղտոտվածությունը կարող է առաջանալ արդյունաբերական գործընթացների, տրանսպորտային միջոցների, ճանապարհային փոշու, շինարարության, գյուղատնտեսական և այլ գործողությունների հետևանքով:



Ապրիլին մարտ ամսվա համեմատությամբ ազոտի երկօքսիդը Գյումրում նվազել է մոտ 49%-ով, Վանաձորում՝ 21%-ով, Ալավերդում՝ 15%-ով, Հրազդանում՝ 49%-ով, Ծաղկաձորում՝ 55%-ով, Արարատում՝ 40%-ով և Կապանում՝ 25%-ով: Քաջարանում ազոտի երկօքսիդը ապրիլին մարտ ամսվա համեմատությամբ բարձրացել է 11%-ով, իսկ Երևանում՝ 2%-ով: Վերոնշյալ քաղաքներում ազոտի երկօքսիդի մարտ և ապրիլ ամիսների միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ն: Մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի առաջացման գլխավոր աղբյուրն ավտոտրանսպորտն է:



Մարտ ամսվա համեմատությամբ ապրիլին ծծմբի երկօքսիդը Երևան քաղաքում նվազել է մոտ 40%-ով, Գյումրում՝ 53%-ով, Վանաձորում՝ 17%-ով, Ծաղկաձորում՝ 49%-ով, Հրազդանում՝ 32%-ով, Արարատում՝ 15%-ով, Կապանում՝ 29%-ով, Քաջարանում՝ 42%-ով, Ալավերդում ծծմբի երկօքսիդի պարունակությունը բարձրացել է 4%-ով: Վերոնշյալ քաղաքներում ազոտի երկօքսիդի մարտ և ապրիլ ամիսների միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ն: Ծծմբի երկօքսիդը մթնոլորտային օդում առաջանում է ծծումբ պարունակող վառելիքների այրման, ինչպես նաև արդյունաբերական այլ գործընթացների ժամանակ:

